

**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ`  
ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ՄԵՂՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՄ-ՈՒՄ, ԱՄՆ-ՈՒՄ ԵՎ  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ -Ի ՀԵՏ**

**Շուշանիկ Ղուկասյան**

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների (այսուհետ՝ Ապրանքներ) թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի զարգացման և դրա առանձնահատկությունների ուսումնասիրությունը ունի կարևոր նշանակություն այս ինստիտուտի բնույթի և էության պարզաբանման համար: Ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆեսոր Բարսեղյանը՝ տնտեսական հարաբերությունների միջազգայնացումը, աշխարհատնտեսական կապերի ոլորտում կատարված արմատական փոփոխությունները պարտադրում են նոր մոտեցում ցուցաբերել տնտեսական հարաբերությունների կարգավորման նկատմամբ: Շուկայական տնտեսություն ստեղծող Հայաստանի Հանրապետության իրավագիտությունը պարտադրված է նոր մոտեցում ցուցաբերել և հատկապես անդրադառնալ այնպիսի հիմնահարցերի պարզաբանմանը, որոնք կարևոր նշանակություն ունեն տնտեսական և տնտեսավարման կառուցակարգերի բնականոն ձևավորման և գործառույթների իրականացումն ապահովելու համար<sup>1</sup>:

Ներկայումս, երբ ստեղծված են իրավական հարաբերությունների կանոնակարգման համաշխարհային փորձը խելամիտ ընդօրինակելու և այն հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորման գործին ծառայեցնելու հնարավորություններ, երբ առկա են տնտեսավարման ազատության հուսալի երաշխիքներ պարունակող իրավական համակարգ ձևավորելու բոլոր հնարավորությունները, անհրաժեշտ է նոր մոտեցում ցուցաբերել իրավական յուրաքանչյուր ինստիտուտի արժևորման նկատմամբ<sup>2</sup>:

Այս համատեքստում առավել կարևորվում է Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման՝ որպես առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի զարգացման հիմնական միտումների բացահայտումը ամերիկյան և եվրոպական իրավական համակարգերում՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ վերը նշված երկրները ունեն առաջադեմ փորձ և դինամիկ զարգացող պրակտիկա սույն ոլորտում, և ընդհանուր առմամբ տնտեսական քաղաքականության, ապրանքաշրջանառության բնագավառում հանդիսանում են առաջատար դիրք զբաղեցնող առանցքային սուբյեկտներ: Ընդ որում, Եվրոպական

<sup>1</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Երևանի պետ. համալսարան: Երևանի համալ. իրատ., Երևան, 2006, էջ 4-5:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 5:

միության քաղաքականության իրավական ձևաչափի համակողմանի ուսումնասիրությունը մեծապես կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության համար, ինչը պայմանավորված է միջազգային ասպարեզում Եվրոպական միության զբաղեցրած տնտեսական դերակատարի ծանրակշիռ կարգավիճակով<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի պատմությունը առավելապես 19-րդ դարում գերիշխող «գույքային հարաբերությունների դոկտրին»-ի վերացման պատմությունն է, որի էությունը այն էր, որ վնաս կրած անձը կարող էր վնասի հատուցման պահանջ ներկայացնել վնաս պատճառողին միայն այն դեպքում, երբ վերջինս հանդիսանում է պայմանագրի կողմ<sup>2</sup>:

Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ժամանակակից ինստիտուտի գաղափարը բխել է անտիկ շրջանի այն տեսակետից, որի համաձայն վաճառողները կրում են առանց մեղքի պատասխանատվություն վաճառվող ապրանքների թերությունների համար: Վաճառողի՝ առանց մեղքի պատասխանատվության սկզբունքը արմատավորված է եղել ավանդույթի և հռոմեական իրավունքի մեջ, որով ապրանք վաճառողներին առաջադրում էր որակի երաշխիք ապահովելու պահանջ, որը բխել է դեռևս մեկ կամ երկու հազար տարի առաջ անտիկ Բաբելոնից<sup>3</sup>:

Հարկ է նշել, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ժամանակակից ինստիտուտի զարգացումը առավելապես կապված է Եվրոպական Միության (այսուհետ՝ Միություն) կողմից 1985 թվականին այս հարցի կարգավորմանն ուղղված հատուկ դիրեկտիվի ընդունման հետ: Հենց այս դիրեկտիվի ընդունումն է դիտարկվում որպես Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ժամանակակից ինստիտուտի զարգացման սկիզբ:

1985 թվականի հուլիսի 25-ին «Ապրանքների համար պատասխանատվության մասին» 85/374 դիրեկտիվի (այսուհետ՝ Դիրեկտիվ) ընդունումը հանդիսացել է միջազգային հանրության կողմից ձեռնարկված առաջին համակարգված փորձը՝ ուղղված Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման միասնական ինստիտուտի ներդրմանը, որից ելնելով՝ անդամ պետություններում այս ինստիտուտը սկսել է զարգանալ Դիրեկտիվով ամրագրված ընդհանուր դրույթների, սկզբունքների համատեքստում՝ հանդիսանալով Միության անդամ երկրներում այս հարցի կարգավորմանն ուղղված հիմնական իրավական ակտը:

Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Միության որևէ երկիր մինչև 1985 թվականի դիրեկտիվի ընդունումը չի ունեցել ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում պատասխանատվության հարցերը կարգավորող հատուկ օրենսդրություն<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Սարգսյան Ա.Գ.**, Եվրոպական միության արտաքին քաղաքականության ձևաչափը երրորդ պետությունների հետ հարաբերություններում, թեկնածուական ատեն., Երևան, 2011, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս **Pasa, Barbara, Gian Antonio Benacchio and Lesley Orme.** “The Harmonization of Civil and Commercial Law in Europe”. Central European University Press. 2005, էջ 101:

<sup>3</sup> Տե՛ս **Owen, David G.** “The Evolution of Products Liability Law”. The Review of Litigation 26.4 (2007), էջ 956:

<sup>4</sup> Տե՛ս **Pasa, Barbara, Gian Antonio Benacchio, and Lesley Orme.** The Harmonization of Civil and Commercial Law in Europe. Central European University Press. 2005, էջ 101:

Դիրեկտիվի կարևորությունը այն է, որ այն ուղղված է պատճառված վնասի համար պատասխանատվություն նախատեսող միևնույն չափանիշների սահմանմանը<sup>1</sup> և ապահովում է պատասխանատվության միասնական դոկտրինալ հիմք Եվրոպական միությունում<sup>2</sup>: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Դիրեկտիվում Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում սահմանվում է պատասխանատվության միասնական ռեժիմ<sup>3</sup>, ինչը արտահայտվում է նրանում, որ տարբերակում չի դրվում պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների միջև: Դիրեկտիվը հստակ ապահովում է սպառողների պայմանագրից բխող հայց ներկայացնելու և արտապայմանագրային հարաբերությունների համատեքստում իրացվող բոլոր իրավունքները<sup>4</sup>: Ընդ որում, արևմտյան իրավական գրականությունում պատասխանատվության բաժանումը պայմանագրայինի և արտապայմանագրայինի ենթարկվել է քննադատության՝ ընդգծելով, որ այդ բաժանման գոյությունը պայմանավորված է բացառապես պատճառված վնասի պատճառներով<sup>5</sup>:

Դիրեկտիվի ուսումնասիրությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը դասվում է առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի շարքին: Հարկ է նշել, որ առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտը, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված առանձին դեպքերի, անհայտ է եղել Եվրոպական միության անդամ պետություններին<sup>6</sup>:

Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման՝ որպես առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտ հանդիսանալու եզրահանգումը բխում է Դիրեկտիվի նախաբանի և 4-րդ հոդվածի վերլուծությունից:

Մասնավորապես, Դիրեկտիվի նախաբանում նշվում է, որ արտադրողի՝ առանց մեղքի պատասխանատվությունը միակ համարժեք միջոցը լուծելու այնպիսի կարևորագույն խնդիրներ են, ինչպիսիք են՝ սպառողներին պատճառված վնասի պարագայում իրավունքների պաշտպանության միևնույն աստիճան ապահովելը, մրցակցություն և միասնական շուկայում ապրանքների ազատ տեղաշարժը խթանելը: Այսինքն՝ Դիրեկտիվի նախաբանում ուղղակիորեն նշվում է առանց մեղքի պատասխանատվության վերաբերյալ, մինչդեռ դրա չորրորդ հոդվածում առանց մեղքի պատասխանատվության հարցին անդրադարձ է կատարվում անուղղակիորեն: Մասնավորապես, Դիրեկտիվի չորրորդ հոդվածը, անդրադառնալով ապա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում էջ 111:

<sup>2</sup> Տե՛ս **Mann, Lawrence C., Rodrigues, Peter R.**, Georgia Journal of International and Comparative Law, Vol. 18, Issue 3 (1988), 18 Ga. J. Int'l & Comp. L. 391 (1988), էջ 425:

<sup>3</sup> Պատասխանատվության միասնական ռեժիմ սահմանելու հանգամանքը հիմնավորվում է Դիրեկտիվի 13-րդ հոդվածով, որը սահմանում է, որ այն չի կարող ազդեցություն ունենալ վնաս կրած անձի որևէ իրավունքի վրա, որով վերջինս օժտված է պայմանագրային կամ արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերով կամ պատասխանատվության հատուկ ռեժիմ սահմանող համակարգով, որը գործում է Դիրեկտիվի վերաբերյալ անդամ պետություններին ծանուցելու պահին:

<sup>4</sup> Տե՛ս **McDougall, Arundel, and Prashant Popat Q.C.** International Product Law Manual. Austin: Wolters Kluwer Law & Business, 2011, էջ 40:

<sup>5</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Գույքային պատասխանատվության հասկացությունը// Իրավագիտության հարցեր, Եր., 2003, N 4, էջ 25:

<sup>6</sup> Տե՛ս **De Lousanoff, Oleg, and Klaus P. Moessler.** "German Products Liability Law and the Impact of the EC Council Directive". The International Lawyer, Vol. 22, Issue 3 (1988), pp. 669-692. էջ 669 - 670:

ցուցման բեռի հիմնահարցին, սահմանում է, որ վնաս կրած անձը պարտավոր է ապացուցել վնասի, ապրանքի թերության, պատճառված վնասի և ապրանքի թերության միջև պատճառական կապի առկայությունը:

Այսպիսով կարող ենք հանգել այն եզրակացության, որ Միության անդամ բոլոր երկրներում Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտը Դիրեկտիվի ընդունումից ի վեր դասվել է առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի շարքը, իսկ Միության անդամ երկրները, հիմք ընդունելով Դիրեկտիվի պահանջները, իրենց ազգային օրենսդրության մեջ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում նախատեսել են վաճառողի կամ արտադրողի առանց մեղքի պատասխանատվություն<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտը ունի զարգացման այլ միտում ամերիկյան իրավական համակարգում որոշ դեպքերում այն դասվում է առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի շարքին, իսկ որոշ դեպքերում պատասխանատվությունը վրա է հասնում վնաս պատճառողի մեղքի առկայության պարագայում:

Ընդ որում, առանց մեղքի պատասխանատվությունը կիրառվում է այն պարագայում, երբ առկա են ապրանքի արտադրական թերություններ, իսկ ապրանքի կառուցվածքային թերությունների կամ ապրանքի մասին ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետ կապված թերությունների դեպքում վնասի հատուցումը իրականացվում է միայն վնաս պատճառողի մեղքի առկայության պարագայում<sup>2</sup>:

Ամերիկյան իրավական համակարգում վտանգավոր ապրանքների առկայությունը դեռևս չի նշանակում, որ դրանք թերություններ ունեցող ապրանքներ են: Սպառողը կրում է ապրանքի թերությունների հետ կապված հնարավոր վնասից պաշտպանվելու պարտականություն, իսկ արտադրողները կարող են պատասխանատվություն կրել միայն ապրանքի այն ռիսկերի համար, որոնք ողջամտորեն կանխատեսելի են: Այսինքն՝ ամերիկյան իրավական համակարգում որպես չափանիշ հանդես է գալիս ողջամտությունը, որը պետք է հիմք ընդունվի ապրանքի կառուցվածքային թերությունների գնահատման ժամանակ<sup>3</sup>:

Ողջամտության չափանիշը ներառում է երկու տարր՝ 1. Ապրանքի ողջամիտ այլընտրանքային կառուցվածքի առկայությունը, 2. Ապացույցի առկայություն այն մասին, որ արտադրողի կողմից ողջամիտ այլընտրանքային կառուցվածք չնախատեսելը հանգեցրել է ապրանքի ոչ բավարար անվտանգությանը: Այս երկու տարրերի առկայությունը որոշելու համար օգտագործվում են մի շարք գործոններ, ինչպիսիք են վնասի կանխատեսելի ռիսկերի մեծությունը և հավանականությունը, ապրանքի վերաբերյալ հրահանգները և նախազգուշացումները, ապրանքի վերաբերյալ սպառողների սպասումների բնույթը: Ապրանքի ոչ պատշաճ նախազգուշացման հետ կապված թերությունների պարագայում սպառողը կրում է արտադրողի կողմից ապրանքի վերաբերյալ համարժեք հրահանգներ և նախազգուշացումներ չապահո-

<sup>1</sup> Դիրեկտիվի 19-րդ հոդվածով անդամ պետություններին առաջադրվում է իրենց օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու պահանջ Դիրեկտիվի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

<sup>2</sup> St' u **Castillo, Joel González**, "Products Liability in Europe and The United States", Revista Chilena de Derecho Vol. 39 N° 2, pp. 277 - 296 (2012) էջ 278:

<sup>3</sup> St' u **Rollo, Rebekah**. "Products Liability: Why The European Union Doesn't Need the Restatement", Brooklyn Law Review 69 (3): 2004. էջ 1098-1101:

վելու փաստը ապացուցելու պարտականություն: Ընդ որում՝ այս պարագայում չեն նախատեսվում վերը նշված գործոնի առկայությունը որոշելու հատուկ չափանիշներ՝ հաշվի առնելով այն, որ համանման դեպքում որոշակի հստակ չափանիշի նախատեսումը գրեթե անհնարին է<sup>1</sup>:

Այսպիսով, իրականացված վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ամերիկյան իրավական համակարգում Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման դեպքում գործող ինստիտուտը իր բնույթով խառն է. մասնավորապես՝ ապրանքի արտադրական թերությունների հետևանքով պատճառված վնասի պարագայում գործում է առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտը, իսկ ապրանքի կառուցվածքային թերությունների կամ ապրանքի մասին ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետ կապված թերությունների դեպքում պարտադիր է վնաս պատճառողի մեղքի առկայությունը:

Ընդ որում ամերիկյան իրավական համակարգում ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի պարագայում նախատեսվում է նաև պատժիչ վնասի «punitive damage» հատուցման հնարավորություն: Պատժիչ վնասը առաջին անգամ կիրառվել է Անգլիայում 1763 թվականին, որից հետո անմիջապես կիրառություն է ունեցել ամերիկյան գաղութներում: Մինչև 1850-ական թվականները պատժիչ վնասը դարձել է անգլո-ամերիկյան քաղաքացիական իրավունքի բաղկացուցիչ մասը<sup>2</sup>: Ինչպես նշվում է գրականության մեջ, պատժիչ վնասի հատուցումը ունի պատժիչ և զսպողական նպատակ՝ ուղղված վնաս պատճառող անձի (արտատվոր) վարքագծի և այն անձանց դեմ, ովքեր ապագայում կարող են դրսևորել համանման վարքագիծ: Հատուցման ենթակա վնասի մյուս տեսակները կենտրոնացված են անհատ տուժողի անձի վրա, մինչդեռ պատժիչ վնասը եթե ոչ բացառապես, ապա հիմնականում կենտրոնացված է վնաս պատճառող անձի անօրինական արարքի վրա<sup>3</sup>:

Պատժիչ վնասի հատուցում տրվում է այն դեպքում, երբ վնաս պատճառող անձը գործել է դիտավորությամբ կամ թույլ է տվել անձի իրավունքների կոպիտ խախտում: Այս ոլորտում առաջատար գիտնական Ղևիդ Օուենի արտահայտած տեսակետի համաձայն ամերիկյան դատական պրակտիկայում վերջին շրջանում պատժիչ վնասի հատուցումը բավական մեծ չափերի է հասել, ինչից ելնելով ԱՄՆ գերագույն դատարանը *Pacific Mutual Life Insurance Co. v. Hasli* գործով արձանագրել է, որ պատժիչ վնասի հատուցման չափերը պետք է լինեն ողջամիտ և ռացիոնալ՝ պատժելու և կանխելու նպատակի համատեքստում<sup>4</sup>: Օրինակ *Grimshaw v. Ford Motor Co.* գործով Կալիֆորնիայի վերաքննիչ դատարանը բավարարել է պատժիչ վնասի հատուցման տրամադրումը այն պատճառով, որ Ֆորդ ընկերությունը չի տեղադրել անվտանգության միջոցներ *Ford Pinto* ավտոմեքենաներում, և

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս **Բեքմեյսան Գ.Հ.** «Քաղաքացիական օրենսդրությամբ ոչ նյութական վնասի հատուցման մի շարք հարցերի շուրջ»// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմի գիտական նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 197:

<sup>3</sup> Տե՛ս **Behr, Volker** "Punitive Damages in America and German Law-Tendencies towards Approximation of Apparently Irreconcilable Concepts." *Chi.-Kent L. Rev.*78 (2003), էջ 110-111:

<sup>4</sup> Տե՛ս **Ausness, Richard C.** "Products Liability in the Twenty-First Century: A Review of Owen's Products Liability Law." *SCL Rev.* 58 (2006), էջ 452:

պատժիչ վնասի հատուցման նպատակ է հանդիսացել Ford ընկերությանը պատժելը և ապագայում նման դեպքերը կանխարգելելը<sup>1</sup>:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ պատժիչ վնասի հատուցումը հետապնդում է վնաս պատճառող անձին պատժելու և ապագայում համանման դեպքերը կանխելու նպատակ՝ ի տարբերություն հատուցման ենթակա վնասի այլ տեսակների, որոնք առավելապես հետապնդում են տուժողին համարժեք փոխհատուցում տրամադրելու նպատակ:

Ի տարբերություն եվրոպական երկրների՝ պատժիչ վնասի հատուցման հնարավորություն նախատեսվում է նաև Ավստրալիայում, Կանադայում, Անգլիայում, Նոր Զելանդիայում<sup>2</sup>: Չինաստանում ևս նախատեսվում է պատժիչ վնասի հատուցում տալու հնարավորություն անձի առողջությանը լուրջ վնաս պատճառելու կամ մահվան դեպքում<sup>3</sup>: Հայրենական իրավագիտության մեջ ևս առաջարկ է արվել ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ընդլայնել ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը՝ ամբողջական ներառելով պատժիչ վնասի հատուցումը<sup>4</sup>:

Իրականացված վերլուծությունից կարող են եզրահանգել, որ եվրոպական երկրների կողմից որդեգրված մոտեցումը առավել մոտ է ՀՀ օրենսդրի որդեգրած մոտեցմանը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում ևս Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը դասվում է առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի շարքին: Այս հարցին ուղղակիորեն անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածում, որը սահմանում է ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի պատասխանատվությունը՝ անկախ նրանց մեղքից: Ինչպես արդարացիորեն նշում է Գ.Բեքմեյանը, օրենքը, ավելի բարենպաստ միջավայր սահմանելով վերջնական սպառողի իրավունքների պաշտպանության համար, փորձել է կարգավորման ենթարկել ապրանքների, ծառայությունների, աշխատանքների արդյունքում պատճառված վնասի ինստիտուտը՝ սահմանելով առանց մեղքի պատասխանատվություն արտադրողի և ապրանքը վաճառողի համար<sup>5</sup>:

Այս առումով հարկ է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք արդարացված է Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման՝ առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի շարքին դասումը, թե ոչ: Տարբեր հեղինակների արտահայտած տեսակետների վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգել այն եզրակացության, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման՝ որպես առանց մեղքի պա-

<sup>1</sup> St' u Behr, Volker "Punitive Damages in America and German Law-Tendencies towards Approximation of Apparently Irreconcilable Concepts." Chi.-Kent L. Rev.78 (2003), էջ 121:

<sup>2</sup> St' u Slawotsky, Joel "Liability for Defective Chinese Products Under the Alien Tort Claims Act." Wash. U. Global Stud. L. Rev. 7 (2008), էջ 540:

<sup>3</sup> St' u Brüggemeier, Gert "European Civil Liability Law Outside Europe. The Example of the Big Three: China, Brazil, Russia." Journal of European Tort Law 2.1 (2011), էջ 105:

<sup>4</sup> St' u Բեքմեյան Գ.Հ. ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ոչ նյութական վնասի հատուցման մի շարք հարցերի շուրջ// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ իրատ., 2015, էջ 196:

<sup>5</sup> St' u Բեքմեյան Գ.Հ., Արտապայմանագրային պարտավորություններ., Եր., Երևանի պետ.համալս.հրատ., 2009, էջ 238:

տասխանատվության ինստիտուտի առանձնացումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

1. Սպառողներն ի վիճակի չեն ինքնուրույն և համարժեքորեն իրենց պաշտպանել թերություններ ունեցող ապրանքներից՝ հաշվի առնելով դրանց լայնածավալ քանակը, բազմազանությունը,

2. Վաճառողները սպառողների համեմատ ունեն ապրանքների հնարավոր ռիսկերը բացահայտելու, ռիսկերի հետ կապված ընդունելի սահմանները որոշելու և այդ սահմաններում ռիսկերը սահմանափակելու ավելի լայն հնարավորություններ,

3. Ուստ մեղքի պատասխանատվությունը կարող է հանգեցնել շուկա վտանգավոր ապրանքներ ներմուծելուն, մինչդեռ առանց մեղքի պատասխանատվությունը հանգեցնում է ապրանքների հետևանքով պատճառվող վնասի դեպքերի նվազեցմանը՝ հանդիսանալով արտադրողների կողմից ապրանքների անվտանգության ապահովման յուրահատուկ խթան և ապահովելով տուժողին վնասի հատուցում տալու հնարավորություն,

4. Բացի այդ, ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի պարագայում վնաս պատճառողի մեղքի առկայության հարցի պարզաբանումը և ապացուցումը սովորաբար պրակտիկորեն անհնար են<sup>1</sup>:

Միևնույն ժամանակ, առանց մեղքի վաճառողի պատասխանատվության նախատեսումը պայմանավորված է գլխավորապես նաև այն հանգամանքով, որ առկա է տեղեկատվության տիրապետման անհամասնություն ապրանք արտադրողների, վաճառողների և սպառողների միջև: Վերը նշվածը պայմանավորված է հետևյալով՝

1. Արտադրողը ձեռք է բերում ապրանքի բնույթի վերաբերյալ կարևոր տեղեկատվություն դրա նախագծման և արտադրության ընթացքում,

2. Արտադրողը ունի ապրանքի մասին լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերելու առավել մեծ շահագրգռվածություն, քանի որ վերջինս հանդիսանում է ապրանքների հետ կապված հնարավոր ծախսեր կրողը,

3. Սպառողները օժտված չեն ապրանքի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու արդյունավետ հնարավորություններով և տիրապետում են սահմանափակ տեղեկատվության<sup>2</sup>:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը առավել նպատակահարմար և հիմնավոր է իրականացնել առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի համատեքստում, և այս առումով առավել հիմնավոր է Եվրոպական միության որդեգրած մոտեցումը և դրան համանման ՀՀ օրենսդրի մոտեցումը՝ հիմք ընդունելով այն, որ սպառողները գործնականում ապահովված չեն ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու, դրանց անվտանգության ապահովման համար արդյունավետ միջոցներ ձեռնարկելու, ապրանքների հետ կապված հնարավոր ռիսկերից իրենց ապահովագրելու անհրաժեշտ գործիքակազմով, իսկ արտադրողները և վաճառողները ի տարբերություն սպառողների, օժտված են ապրանքների անվտանգությունն ապահովելու, դրանց ռիսկերը նվազեցնելու գործնական հնարավորություններով թե՛ ապրանքի արտադրության և թե՛ իրացման ընթացքում:

<sup>1</sup> St' u Castillo, Joel González, "Products Liability in Europe and The United States", Revista Chilena de Derecho Vol. 39 N° 2, pp. 277 - 296 (2012, էջ 289-291:

<sup>2</sup> St' u նույն տեղում էջ 290:

## THE EVOLUTION OF THE INSTITUTE OF PRODUCT LIABILITY AS THE INSTITUTE OF LIABILITY WITHOUT FAULT IN EU, USA AND COMPARATIVE ANALYSIS WITH THE REPUBLIC OF ARMENIA

Shushanik Ghukasyan

*PhD student at the YSU Chair of Civil Law*

The compensation of the damage caused by the shortcomings of products, works and services is one of the key branches of the institute of liability without fault. **The work presents the main features of the evolution of product liability institute in American and European legal systems, their basic differences, comparative analysis with the legislation of the Republic of Armenia.** The work justifies the necessity and appropriateness of separating the **product liability institute** as an institute of liability without fault.

## ЭВОЛЮЦИЯ ИНСТИТУТА ВОЗМЕЩЕНИЯ ВРЕДА, ПРИЧИНЕННОГО НЕДОСТАТКАМИ ТОВАРОВ, РАБОТ И УСЛУГ, КАК ИНСТИТУТА ОТВЕТСТВЕННОСТИ БЕЗ ВИНЫ В ЕС, США И СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ С РА

Шушаник Гукасян

*Аспирант Кафедры гражданского права ЕГУ*

Возмещение вреда, причиненного недостатками товаров, работ и услуг является одной из ключевых отраслей института ответственности без вины. В работе представлены основные особенности эволюции института возмещения вреда причиненного вследствие недостатков товаров в американских и европейских правовых системах, их основные различия, сравнительный анализ с законодательством Республики Армения. В работе обоснована необходимость и целесообразность разделения возмещения ущерба, причиненного недостатками товаров в качестве института ответственности без вины.

**Բանալի բառեր**– ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, պատճառված վնաս, առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի զարգացում, 1985 թվականի դիրեկտիվ  
**Ключевые слова:** товары, работы, услуги, нанесенный вред, эволюция института ответственности без вины, директива 1985 года

**Key word:** products, works, services, caused damage, the evolution of the institute of liability without fault, 1985 directive